

Եկաւ Շահ Աբաս իր անողոք զօրքերով, գերեց քշեց Այրարատի Հայութիւնը, անորդի դարձուց Մայր էջմիածինը, բայց Հայ ազգը դիմացաւ իր Լուսաւորչին պէս, վերակերտեց իր տունը եւ ծաղկեցուց իր այգին:

Նոր դար՝ նոր աղէտ. Լուսաւորչի թոռները դեռ պիտի տառապէին իրենց նախահօր նման: Ահաւոր էր լուրը. Հայուն գոյութեան վտանգը կը սպառնար: Անդրանիկ յիշեց Տրդատի Թուրը, ձեռք առաւ զայն, հեծաւ իր սպիտակ ձին եւ իջաւ ասպարէզ: Կայծակէ թուրը կը շողար հրացայտ, կրակ կար Անդրանիկի աչքերուն մէջ, ոսոխները ընկրկեցան: Անդրանիկ ետին դարձաւ, երկնքի եւ երկրին միջեւ կանթեղ մը լոյս կ'արձակէր. Լուսաւորչի կանթեղն էր, յաւիտենական խորհրդանիշը Հայուն հաւատքին եւ անմեռ կենդանութեան: Անդրանիկի անաղարտ անունը պարուրուեցաւ լոյսերով:

Մենք էջմիածին մը ունինք, որուն վերեւ կը պլպլայ Լուսաւորչի Կանթեղը եւ կը շողշողայ Տրդատի Թուրը: Դարեր կու գան, դարեր կ'երթան, էջմիածինը կ'ապրի իր քարեղէն գոյութեամբ եւ հոգեղէն զօրութեամբ: Անոր լուսաշող ճառագայթները սահման ու արգելք չեն ճանչնար, կը թափանցին ամէն տեղ ուր որ Հայ կայ, եւ կը ցոլցնեն այն ճամբան որ կը տանի դէպի անմահութիւն:

ՆՈՐԱՅՐ ԱՐՔ. ՊՕՂԱՐԵԱՆ

(«Սիոն», 1977, ԾԱ. Տարի, Մայիս-Յունիս, Թիւ 5-6, Էջ 130-132)

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Առանց վտանգի յաղթողը՝ առանց փառքի յաղթանակած կ'ըլլայ:

Արձակուած նետը, խօսուած խօսքն ու անցած պատեհութիւնները ետ չեն գար:

Երկար լեզուն կը կրճատէ կեանքը:

Լեզուն կակուղ միս է՝ բայց ի՛նչ ոսկորներ կը փշրէ:

Լեզուն աւելի մեծ բանականեր կը ջնջէ՝ քան սուրը:

Խօսիլը՝ ցանել է, իսկ միտք ընելը՝ քաղել:

Տառապանքն ալ իր հաճոյքն ունի:

Ոտքդ կրնայ սահիլ, բայց լեզուդ երբեք պէտք չէ սահի:

Վրէժխնդրութեան պառճառած գոհունակութիւնը կարճատեւ է, մինչդեռ ներողամտութեան պատճառած ուրախութիւնը մշտատեւ:

Լեզուին մէջ թոյն ունեցողը, չի կրնար մեղր թքնել: